ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

-- դեկտեմբերի 2023 թվականի №----Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի №489Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը, 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 19-ի №180Ն որոշմամբ հաստատված կարգը և հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի հոկտեմբերի 13-ի №Ե-1603-23 և նոյեմբերի 14-ի №Ե-1783-23 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018-2027 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին» №489Ա որոշման՝
    1) №№1-6 հավելվածների 2023 թվականի հատվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման №№1-6 հավելվածների.
    2) 2-րդ կետի 2.1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

    «2.1) «2.1) Այն պարագայում, երբ սույն որոշման №1 հավելվածի 1-6-րդ և 8-րդ կետերով նախատեսված աշխատանքները կիրականացվեն մասնակի, ու այդ

կետերով փաստացի իրականացված ու շահագործման հանձնված և համաձայնեցված աշխատանքների տոկոսային հարաբերակցությունը ավելի պակաս կլինի, քան №4 հավելվածով փաստացի իրականացված և շահագործման ու համաձայնեցված ներդրումների տոկոսային հարաբերակցությունը, ապա սակագնային մարժայի շահույթի և մաշվածության հաշվարկման բազաներում №4 հավելվածով իրականացված ներդրումները կներառվեն №1 հավելվածի 1-6-րդ և 8-րդ կետերով փաստացի իրականացված ու շահագործման հանձնված և համաձայնեցված աշխատանքների տոկոսային հարաբերակցության չափով.».

3) 2-րդ կետի 2.2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.2) սույն կետի 2.1-ին ենթակետով սահմանված կարգավորումը կիրառվում է, եթե նույն կետով նախատեսված հարաբերակցությունների տարբերությունը գերազանցում է հինգ տոկոսը՝ կիրառելով հարաբերակցության ամբողջ չափը.».

4) 2-րդ կետի 7-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով ու կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ ենթակետով.

«8) Ենթասպառողներ ունեցող սպառողների առևտրային հաշվառումն ապահովող հաշվառման համալիրների (այդ թվում՝ ենթասպառման ուղղության) համապատասխանեցումը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №522-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոնների պահանջներին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունն իրականացնում է առաջնահերթ՝ համաձայն հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №517-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների 107-րդ կետով սահմանված ժամկետների:»:

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև 2024 թվականի մարտի 1-ը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել

ընկերության 2024-2034 թվականների ներդրումային ծրագիրը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 15-ի №489Ա որոշմամբ սահմանված առաջնահերթությունները:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- դեկտեմբերի 2023թ.